ՁԵՎ N 2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գոռ Ասրյան՝ Լոռու մարզի փոխմարզպետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**. – Իտալիա, Գրոսսետո, 30.09 - 05.10.2024թ.

4. **Հրավիրող կողմը** (առկայության դեպքում). – Ծրագրի կազմակերպիչներ՝ ԵՄ ծրագրերի շրջանակում FAO, UNDP, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

5. **Գործուղման նպատակը** – Միջազգային ուսումնական այց «Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» (LEAD)

6. **Քննարկված թեմաները** (հարցերը)- ՏԱԽ-երի գործունեությունը, կառավարումը և գործընկերային հարաբերությունները ՏԱԽ-ի 27 համայնքներում, ՏԱԽ-ի՝ որպես կազմակերպություն պատմական զարգացումը, ՏԱԽ-ի տարածքային զարգացման ռազմավարության ներկայացումը, ՏԱԽ-ի առաջնահերթությունները և որոշումների կայացման համակարգը, ՏԱԽ-ի կողմից ծրագրերի ընտրությունը և ֆինանսական պլանի սահմանումը, ՏԱԽ-ի կողմից իրականացվող ծրագրերի առաջընթացի մոնիթորինգը և վերահսկողությունը:

Քննարկումներ տարածաշրջանային զբոսաշրջային գործակալության դերակատարության և գործընթացների մասին, հիմնական շեշտադրումը դնելով տեղական տնտեսական գործունեության իրականացման, աջակցության և հետագա զարգացումների վրա:

7. **Հանդիպումները**- Այցելություն ՏԵՄԱ Բանկ, տնօրեն պարոն Ֆաբիո Բեկերինի, որը կոոպերատիվ վարկային բանկ է, գտնվում է ՏԱԽ-ի տարածքում և շահագրգռված է տեղական սոցիալ-տնտեսական զարգացմամբ՝ ուշադրություն դարձնելով սոցիալական և բնապահպանական կայունությանը, ինչը և կոոպերատիվ վարկային բանկերի առաքելության հիմնաքարն է:

Աշխատանքային հանդիպում կազմակերպիչների հետ, ճանաչողական այցի, բովանդակության և երթուղու ներկայացում՝ հիմնական ուշադրությունը դարձնելով Իտալական մշակութային ժառանգությանը, տեղական արտադրանքին և զբոսաշրջային ծառայությունները միմյանց կապելուն:

Այցելություն «Տոսկանիայի Հանքարդյունաբերական ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գեոպարկ» տեղական զարգացման գործակալություն», հանդիպում Գավորրանո համայնքի քաղաքապետ՝ տիկին Ստեֆանիա Ուլիվիերի և գեոպարկի նախագահ՝ տիկին Ֆաբիոլա Ֆավիլլիի հետ: Տեղում ծանոթացել ենք իրականացվող ծրագրերին՝ «Կայուն զբոսաշրջության եվրոպական խարտիան տեղական կայուն

զբոսաշրջության զարգացման համար՝ հիմնված LEADER/CLLD մեթոդաբանության վրա», «Գեպարկը որպես սոցիալ-տնտեսական և մշակութային խթան՝ մասնակցային գործունեության միջոցով կայուն զարգացման մոդել ստեղծելու նպատակով, «Կայունության հետ կապված ծրագրեր (կայուն զբոսաշրջություն, վերականգնվող գյուղատնտեսություն, կանաչ, կապույտ և շրջանաձև տնտեսություն)», «DRAGO» կայուն գյուղմթերքի արտադրողների ցանց, «GEOfood» ծրագիր (ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գեոպարկը կարող է խթանել տեղական գյուղատնտեսությունն ու գաստրոնոմիական առևտուրը): Այնուհետև ունեցել ենք շրջայց հանքարդյունաբերության թանգարանում:

Հանդիպում պարոն Ֆեդերիկո Կոմանդիի հետ՝

Ունեցել ենք մի քանի դաշտային այցելություններ.

- Սան Լուիջի ձիթհան (Կալդանա գյուղ): Այն ընտանեկան ձիթհան է, ով արտադրված ձիթապտղի ձեթին համապատասխան վճարում է արտանետված ածխաթթու գազի դիմաց: Այն DRAGO ցանցի անդամ է և արտադրում է GEOfood արտադրանքներ:
- Անգելա Սաբայի ոչխարաբուծական ծրագիր: Տնտեսությունը զբաղվում է ոչխարաբուծությամբ և Օմեգա 3-ով հարստացված ոչխարի պանրի արտադրությամբ:
- «Rocca di Frassinello» գինեգործարան և գինեգործական ընկերություն, որը Գեոպարկի գործընկեր է: Գինեգործարանը նախագծվել է Ռենցո Պիանոյի կողմից՝ հաշվի առնելով նորարարական և էներգախնայողական մոտեցումները: Տարածքում գործում է Էտրուսկների թանգարան (հնագույն լատինական քաղաքակրթություն)՝ որը համագործում է Գեոպարկի հետ: Թանգարանի շրջակայքում առկա են դամբարաններ: Այցելություն ընկերության խաղողի այգիներ, Մարեմմայի անասնապահական տնտեսություն, ձիթապտղի այգիներ, բանջարանոցներ և ցորենի հին շտեմարաններ:

Հանդիպել ենք Ակվապենդենտե համայնքի քաղաքապետ՝ տիկին Ալեսանդրա Սերոսի, Լացիոյի մարզի իշխանության ներկայացուցիչի և Տուշիա ՏԱԽ-ի նախագահի հետ՝ Մարկո Վալենտե:

Այցելել ենք Բանյորեջո համայնք՝ Տուշիա ՏԱԽ-ի կենտրոն, հանդիպել ենք Բանյորեջոյի քաղաքապետ Լուկա Պրոֆիլիին, այնուհետև ներկայացվել է LEADER ծրագրերով ստեղծված քայլուղու նախագծը: Այցելություն AMALTEA ֆերմա, հանդիպում սեփականատեր պարոն Տրուկկային, ով ներկայացրեց իրենց գործառույթները, ֆերմայի արտադրանքներն ու դրանց բաղադրատոմսերը՝ ընդգծելով համագործակցությունը ՏԱԽ-երի և համայնքի հետ:

Հաջորդ այցելության վայրը Չիվիթելլա դ'Ալյանո համայնքն էր, որտեղ հանդիպել ենք քաղաքպետ Սերջո Մոտտուրանին, ծանոթացել ենք այդ համայնքում իրականացված LEADER ծրագրերին, այցելել ենք Sergio Mottura գինեգործարան և սոցիալական Canino ձիթհան, վերջինս ամենակարևոր սոցիալական ձիթհաներից մեկն է ազգային մակարդակում: Ծանոթացել ենք ընկերությունների գործունեությանը:

Այցելություն Ֆլորենսի Տոսկանայի մարզային կառավարություն, հանդիպում վարչության տնօրեն պարոն Ֆրանչեսկո Թապինասին: Հանդիպում Տոսկանայի կառավարությանը պատկանող Toscana Promozione Turismo զբոսաշրջային գործակալության ղեկավարության հետ:

Պրակտիկայի փոխանակման և Հայաստանի տարածքային զարգացման դինամիկան խորացնելու նպատակով զբոսանք Ֆլորենսով և ուսումնասիրություն Իտալիայում զբոսաշրջային գործունեության հետ:

Վարպետության դաս՝ Ֆլորենսի համալսարանի պատմության, հնագիտության, աշխարհագրության, կերպարվեստի և ցուցադրական արվեստների բաժնում՝ Պրոֆեսոր Միշել Նուչիոտտի, Պրոֆ. Զարուի Պողոսյան:

Այցելություն Ֆլորենսի պատմական կենտրոնում գտնվող Ս. Լորենցոյի կենտրոնական շուկա, որը Տեղական արտադրանքների վաճառքի յուրօրինակ վայր է, որտեղ ֆերմերներ են գալիս ծայրամասային գյուղական տարածքներից և ամեն օր պատրաստվում ու վաճառվում է Իտալական բազմատեսակ սնունդ և մթերք՝ Ֆլորենս քաղաքի բնակիչների և զբոսաշրջիկների համար:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**- Չկան:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները** - համագործակցել հնարավոր բոլոր ոլորտներում, մասնավորապե LEADER ծրագրերի իրենց առաջատար փորձի հնարավոր կիրառումը Հայաստանում:

Գործուղվող՝ Գ. Ասրյան

08.10.2024թ.